

## Արձանագրություն հ.4

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի  
17.06.19 թ. կայացած նիստի .

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 անդամներից 32-ը:

Օրակարգում`

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
2. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթ:
3. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները: Նրանք ներկայացրեցին իրենց ամբիոնների առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման վերաբերյալ ամբիոնի նիստերի որոշումները:

Որոշեցին հաստատել ամբիոնների նիստերի որոշումները և ատեստավորել առկա ուսուցմամբ ասպիրանտներին / ատեստավորման վերաբերյալ քաղվածքներն ուղարկվում են ԵՊՀ ասպիրանտուրայի բաժին/:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ. տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյանը: Նա ներկայացրեց <<Նորարարության տնտեսագիտություն>> ամբիոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի մասնակից տ.գ.դ., պրոֆ. Աշոտ Խաչատուրի Մարկոսյանի անձնական գործերի տվյալները և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի 14.06.19թ. կայացած նիստի որոշումը այն մասին, որ Ա.Խ.Մարկոսյանի թեկնածությունը երաշխավորվում է նշված ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար:

Արտահայտվեցին` ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆ. Հ.Մարգարյանը, պրոֆեսորներ Վ.Բոստանջյանը, Մ.Միքայելյանը, , դոց. Կ.Զուրաբյանը: Նրանք բոլորն էլ երաշխավորեցին Ա.Խ.Մարկոսյանին մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը:

Որոշեցին ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով` Կարապետյան Ա.  
/նախագահ/, Բարխուդարյան Գ., Վարդանյան Ի.:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա.Կարապետյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Քվեարկությանը մասնակցել են գիտխորհրդի 36 անդամներից նիստին ներկա 32-ը: Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Մարկոսյանի օգտին քվեարկել են կողմ 26-ը, 4-ը եղել են դեմ, քվեատուփում առկա է եղել 2 անվավեր քվեաթերթ:

Որոշեցին՝ 1. Հաստատել ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

2. Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Խ. Մարկոսյանին համարել ընտրված <<Նորարարության տնտեսագիտություն>> ամբիոնի վարիչի պաշտոնում:

3. Հաստատել հետևյալ եզրակացությունը: Հաշվի առնելով այն, որ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյանն ունի ավելի քան չորս հարյուր հրատարակած գիտական աշխատանքներ, աշխատել է պետական կառավարման համակարգի տարբեր կառույցների ղեկավար պաշտոններում, ԵՊՀ-ում աշխատել է համատեղությամբ, իսկ 2017թ-ից համարվում է հիմնական աշխատող, ինչպես նաև նկատի ունենալով ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի որոշումը, ֆակուլտետի գիտխորհրդի նիստի փակ, գաղտնի քվեարկության արդյունքները, դիմել ԵՊՀ գիտխորհրդին տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյանին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի նորաբաց <<Նորարարության տնտեսագիտություն>> ամբիոնի վարիչի պաշտոնում:

Գիտխորհրդի նախագահ,  
ու. գ. դ., պրոֆեսոր



Հ.Լ. Սարգսյան

Գիտխորհրդի քարտուղար,  
ու. գ. թ., պրոֆեսոր

Ա. Հ. Համբարձումյան